Doi: 10.56737/2953-7843-2025.08-16

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1999–2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ԸՍՏ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ)[1]

ՄՈՒՏՔ

Հանրահայտ փաստ է, որ Մայր Աթոռը՝ ի դեմս առաջին հերթին եւ գլխավորաբար Ամենայն Հայոց կաթողիկոսների, ամենայն պատասխանատվությամբ սրտացավ ու հոգատար վերաբերմունք են ցուցաբերել Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի ոգեկոչման, գաղթականների փրկության, ամենից տարբեր ատյաններում նրանց իրավունքների պահանջատիրության պաշտպանության հարցերում: Այդ ամենի վառ վկայությունն է մասնավորապես Մկրտիչ Ա. Խրիմյան, Գեւորգ Ե. Սուրենյան, Վազգեն Ա. Պալճյան Հայրապետների գործունեությունը:

Եւ ահա, նրանց հավատարիմ ժառանգորդ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսյանի հայրենանվեր եւ բազմակողմանի բեղուն գործունեության ողջ համալիրում առանձնակի տեղ ունի Հայոց ցեղասպանության նկատմամբ հայրապետական դիրքորոշումը՝ արդեն միանգամայն այլ քաղաքական հասարակարգի պայմաններում, ներազգային նոր մոտեցումների ու մարտահրավերների եւ հատկապես արտաքին-միջազգային նոր կործանանար սպառնալիքների հանդիման:

Իհարկե, թեպետ կարեւոր, բայց ոչ ամբողջական է միմիայն «էջմիածին» ամսագրի հրապարակումների հիման վրա Գարեգին Բ. Վեհափառի գործունեության ու դիրքորոշման ներկայացումը: Լինելով Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը, այդուհանդերձ, այն ցեղասպանության շուրջ Գարեգին Բ. Վեհափառի գործունեության տեղեկատվական կարեւոր, սակայն մի մասն է ընդամենը ներկայացնում: Սակայն, միաժամանակ, ամսագիրն այն վստահելի ու առաջնակարգ սկզբնաղբյուրն է այս թեմայի հետագա ավելի ամբողջական հետազոտության համար:

---

[1]* *Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025: էլ. հասցե՝* avag.harutyunyan@yandex.com:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇ

Իհարկե, Հայրապետական խոսքի մեջ առաջնայինը կոնդակներն են, որոնք արտացոլում են ինչպես բուն Վեհափառի, այնպես էլ եկեղեցու պաշտոնական դիրքորոշումն ու մոտեցումները: Ըստ այդմ՝ ժամանակագրական սկզբունքով կներկայացնենք Հայրապետական կոնդակները՝ զուգահեռելով հարակից ուղերձներով:

Գահակալ ընտրվելուց հետո, արդեն իսկ առաջին հրապարակային ուղերձում, Գարեգին Բ. Վեհափառը Հայոց ցեղասպանությունն ու Հայկական հարցը դիտարկեց պատմաքաղաքական եւ համամարդկային տեսանկյունից. «Մեր ժողովուրդը բազմադարյա իր կենսագրության մեջ շատ ու շատ է աղետահարվել ու կորուստներ կրել, բայց առանձնակի ցավ են տասնինը եւ քսաներորդ՝ լուսավորյալ համարվող դարերում թուրքական կառավարության մշակած եւ սառնասրտորեն իրականացրած ջարդերը, որ ուղղված էին «Հայկական հարցի» «լուծմանը»՝ չկա հայություն, չկա Հայկական հարց սկզբունքով: Սեւ տառերով գրվեց 1915 թվականը հայոց պատմության՝ սեւ խարանով դաջվելով մարդկության պատմության էջերում: Հայոց ցեղասպանության դատապարտումը անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, որ դարավոր երազ ունեն հաշտության, խաղաղության, փոխվստահության, բարի կամեցողության»[2]:

Վեհափառի հաջորդ ելույթը խորհրդանշական վայրում էր. ցեղասպանության զոհերի վերջնական հանգրվան Դեր Զորում, որտեղ Գարեգին Բ. ուխտի էր գնացել[3]: 2001 թ. ապրիլի 24-ին Հայրապետը մասնավորապես նշեց. «Եկել ենք որպես շնորհընկալ Ամենայն Հայոց Հայրապետ՝ առաջին անգամ հանուն մեր նախորդների այսօր խորին խոնարհումով ծնրադրելու եւ Մայր հայրենիքի ու Սուրբ Էջմիածնի օրհնությունը բաշխելու շիկագույն այս հողին, որը, ժամանակին անջուր ու անմարդաբնակ, հավաքական ձեր գերեզմանը դարձավ ու սրբագործվեց մարտիրոսյալ ձեր արյամբ՝ նվիրական դառնալով համայն հայոց համար: Եկել ենք ուխտի, սրբազան երդման»[4]:

---

[2] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մեծ եղեռնի առիթով, 2000, թ. 4, էջ 10–12: Այս համարում հրապարակված են ցեղասպանության ոգեկոչմանը Վեհափառի մասնակցության լուսանկարներ:*

[3] *Մանրամասն տե՛ս Պ. Հովհաննիսյան, Վեհափառ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր, 2001, թ. 4, էջ 21–37:*

[4] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց եղեռնի 86-րդ տարելիցի առիթով, 2001, թ. 4, էջ 10–12:*

2005 թ. Յեղասպանության 90-րդ տարելիցն էր, եւ փետրվարի 3-ին պարտավորեցնող համապարփակ խոսք ասաց Գարեգին Բ. Վեհափառը՝ պատմականորեն հստակ բնորոշելով ցեղասպանություն իրականացնողներին, իրականացման գործիքակազմը, պատճառներն ու հետեւանքները, Հայկական հարցի քաղաքական գնահատականը. «Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մեջ երիտթուրքական իշխանությունները ժամանակը պատեհ նկատեցին՝ ավարտին հասցնելու հայության բնաջնջման թուրքական պետության որդեգրած քաղաքականությունը եւ ընդմիշտ լուծելու Հայկական հարցը: Մեր ժողովուրդը մահվան էր դատապարտված միայն հայ եւ քրիստոնյա լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնյա նշանակում էր շարունակել լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի: 20-րդ լուսավորյալ դարը եղեռնով սկսվեց մեր ժողովրդի համար, որ նոր ժամանակներում հույս ուներ գտնել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն եւ խաղաղ կյանք: Այս էր Հայկական հարցի բովանդակությունը: Սահմանադրական իրավունքներից խոսող երիտթուրքական իշխանություններն ամեն ինչ հաշվարկել էին՝ չկա ժողովուրդ, չկա Հայկական հարց, չկա ժողովուրդ, չկա պահանջատեր»[5]:

Սակայն, այդուհանդերձ, Վեհափառը հույսի ու հավատի տեսլական է հորդորում հայությանը. «Զարահնար ծրագրի հեղինակները վստահ էին, որ իսպառ պիտի բնաջնջվի հայությունը, երկրեերկիր ցրվելով՝ անհիշատակ ու անհետ պիտի վերանա պատմության ասպարեզից: Ամեն բան հաշվարկել էին, բայց ոչ՝ Աստծու նախախնամությունը եւ Աստծուն հուսացող ժողովրդի ապրելու եւ արարելու կամքն ու զորությունը»[6]:

Եւ, վերջապես, ուսուցողական եւ բարոյահոգեբանական կարեւոր նշանակություն ունի Վեհափառի արդիական պատգամը. «Չենք մոռացել ու չենք մոռանա Հայոց ցեղասպանությունը, մեր պատմության այս մեծագույն ողբերգությունը: Մեզ հետ են մեր բյուրավոր նահատակները՝ հայտնի ու անհայտ անուններով: 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը պիտի ճանաչվի ու դատապարտվի ողջ աշխարհի ու նաեւ Թուրքիայի կողմից՝ այն համոզումով, որ բռնություններն ու սպանությունները չեն կարող առաջնորդել մարդկության ճանապարհը»[7]:

---

[5] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակի առիթով, 2005, թ. 2–3, էջ 6–9, թ.4, էջ 3–6:*

[6] *Նույն տեղում:*

[7] *Նույն տեղում:*

2010 թ. ապրիլի 24-ին հայությանն ուղղված խոսքում Գարեգին Բ. Վեհափառը հատկապես կարեւորեց հետեւյալը. «Տասնամյակների ընթացքում մեր ժողովուրդը միայնակ է կրել Ի. դարի իր մեծագույն ողբերգության խոր վիշտը։ Այսօր բյուրավոր մարդիկ մեզ հետ նշում են հիշատակը Յեղասպանության, որ մարդկության կյանքում բացառվեն այդօրինակ ոճիրները, զորանան խաղաղությունը, արդարությունը եւ երջանկությունը աշխարհում։ Այո՛, մեր ժողովուրդը կարողացել է ոտքի կանգնել, բայց դեռ ամոքված չէ կրած կորուստների ցավը։ Յեղասպանության զոհեր են սփյուռքահայ տարագիր մեր զավակները, որոնք տուն, ընտանիք կորցրած, Հայրենիքից զրկված՝ ապրեցին տարբեր երկրներում իրենց նոր կյանքը կառուցելով զրկանքներով ու բազում դժվարություններով։ Յեղասպանության զոհեր են ստիպողաբար իսլամ ընդունած հայերը եւ նրանց սերունդները, որոնք վախենում են խոսել իրենց ինքնության մասին։ Յեղասպանության զոհ է Հայոց Եկեղեցին՝ հարյուրավոր եկեղեցիների ու վանքերի ավերումով, վերածումով մզկիթների, հազարավոր եկեղեցականների կորուստով, մշակութային դարավոր գանձերի մոխրացումով ու ոչնչացմամբ»[8]։

Անտարակույս, 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համազգային ոգեկոչման համապատկերում առանձնացավ Մայր Աթոռի եւ նրա գահակալի դիրքորոշումը։ Արդեն 2014 թ. դեկտեմբերի 28-ի կոնդակում Գարեգին Բ. Վեհափառը կարեւորեց հատկապես արդարության հաստատման պահանջը. «2015 թվականին իւրաքանչիւր օր մեր ժողովրդի համար ոգեկոչման եւ խնկարկման օր է, հոգեւոր երթ դէպի Հայրենիքում եւ Սփիւռքում վեր յառնուած նահատակաց յուշարձաններ՝ ծանրադիր խոնարհումով աղօթք բարձրացնելու անշիրիմ մնացած մեր անմեղ զոհերի հոգիների համար, որոնք մահն ընդունեցին՝ մերժելով հաւատուրացութիւնն եւ ազգուրացութիւնն։ Արդարութիւն է պահանջում մեր զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ՝ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի»[9]։

---

[8] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ, 2010, թ. 4, էջ 11–12։*

[9] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Հայոց ցեղասպանության 100-ամեայ տարելիցի առիթով, 2014, թ. 12, էջ 5–8։*

Սուրբ Հարության տոնի առիթով 2015 թ. ապրիլի 5-ին Վեհափառը մասնավորապես պատգամեց. «Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման համար մեկ դար պայքարեցինք ու շարունակում ենք պայքարել՝ արդարության հաղթանակի հավատով։ Աշխարհը երբեմն լսեց մեզ, երբեմն անտեսեց, որովհետեւ միշտ չէ, որ ունկնդիր է եւ հավատարիմ Քրիստոսի բերած խաղաղության եւ մարդկանց մեջ հաճության պատգամին, ի հետեւանս որի՝ մարդկության նորագույն պատմությունը կրկին մթագնեց նոր ցեղասպանությունների եւ պատերազմների խավարով»[10]։

Այս գաղափարական տեսլականի հոգեւոր-բարոյական գագաթնակետը ցեղասպանության նահատակների սրբադասումն էր, ինչը վաղուց հասունացել եւ սպասելի էր, եւ իրականություն դարձավ հենց Գարեգին Բ. Վեհափառի օրոք։ Սուրբ էջմիածնում 2015 թ. ապրիլի 23-ին սրբադասման արարողության ընթացքում Վեհափառը շեշտեց սրբադասման ոգեղենությունը. «Ցեղասպանության նահատակների սրբադասումը կենարար նոր շունչ, շնորհ եւ օրհնություն է բերում եկեղեցական ու ազգային մեր կյանքում։ Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի հոգեւոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Հայոց ցեղասպանության նահատակներին սրբադասելով։ Մեր սուրբ նահատակների հիշատակն այլեւս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստության աղոթք է, այլ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն»[11]։

2015 թ. ապրիլի 24-ին, արդեն ցեղասպանության 100-րդ տարելիցի համապետական ոգեկոչման միջոցառմանը, Գարեգին Բ. Վեհափառը կրկին շեշտեց ցեղասպանության դատապարտման անհրաժեշտությունը. «Օսմանյան Թուրքիայի կողմից Ի. դարասկզբին իրագործված Հայոց ցեղասպանությունը մեր նորագույն պատմության մեծագույն ողբերգությունն է, որը համարժեք գնահատական եւ դատապարտում չստանալով՝ նախադեպ դարձավ նոր ոճրագործությունների։ Գոհություն Աստծո, այսօր Հայոց ցեղասպանությունը միջազգային

---

[10] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով, 2015, թ. 4, էջ 12–15։

[11] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողության ընթացքում, 2015, թ. 4, էջ 33–35։

հանրության ուշադրության կենտրոնում է, գտնում է ճանաչում եւ դատապարտություն»[12]։

2016 թ. դեկտեմբերի 9-ին ցեղասպանության հանցագործության հիշատակի ու արժանապատվության եւ այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվա առթիվ Գարեգին Բ.-ն ցեղասպանության երեւույթը դիտարկեց համամարդկային ենթատեքստով, կարեւորելով կանխարգելման դերը հնարավոր ցեղասպանությունների բացառման ուղղությամբ. «Ցեղասպանությունը ծանրագույն հանցանք է՝ ուղղված մարդկության դեմ, որը, ցավոք, շարունակվում է եւ մեր օրերում։ Ցեղասպանության վիշտը կրում են նույնպես հույն, ասորի, հրեա, եզդի մեր եղբայր ժողովուրդները։ Մենք՝ որպես ժողովուրդ, որը ապրել է Ի. դարի առաջին ցեղասպանությունը, նախանձախնդիր ենք աջակցելու միջազգային հանրության ջանքերին՝ ուղղված մարդկության դեմ գործվող հանցագործությունների կանխմանը։ Ցեղասպանությունների եւ նման հանցագործությունների կանխարգելումը պահանջում է միջազգային հանրության կամքը, պետությունների հստակ դիրքորոշումը ու հանձնառությունը՝ բացառելով քաղաքական նպատակահարմարությունները։ Համընդհանուր ընդվզում եւ ջանքեր են պետք արմատախիլ անելու համար այսօր հաճախադեպ դարձող ազգայնամոլության դրսեւորումները, կրոնական պատկանելիությամբ պայմանավորված ատելությունը, որոնք ծնունդ են տալիս իրավունքների ոտնահարման, բռնությունների եւ ոճիրների»[13]։

2020 թ. ապրիլի 24-ի ուղերձում Գարեգին Բ. Վեհափառը նշում էր. «Ցեղասպանության տարիներին մեր ժողովուրդը տեսավ մեկ ու կես միլիոն իր զավակների սպանդը, իր ազգային-հոգեւոր արժեքների, մեր սրբավայրերի, վանքերի ու եկեղեցիների, մեր գյուղերի ու քաղաքների ավերումը, կորցրեց իր պատմական հայրենիքի մեծագույն մասը»[14]։

2021 թ. ապրիլի 24-ի ուղերձում Գարեգին Բ. Վեհափառը ցեղասպանությունը դիտարկեց 2020 թ. ադրբեջանական ագրեսիայի արդյունքում

---

[12] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա առթիվ, 2015, թ. 4, էջ 36–37։

[13] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ցեղասպանության հանցագործության հիշատակի ու արժանապատվության եւ այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվա առթիվ, 2016, թ. 12, էջ 7–8։

[14] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առթիվ, 2020, թ. 4, էջ 16–17։

հայոց նոր կորուստների ենթատեքստում. «Ի. դարասկզբին հայ ժողովրդի ցեղասպանությունն արձանագրված է որպես մարդկության դեմ գործված դարի առաջին հանցագործություն՝ ազգի բնաջնջման, էթնիկ թշնամանքի հրեշավոր դրսեւորումներով։ Ցեղասպանության ողբերգության ցավը այսօր արցախյան պատերազմի ծանր կորուստներով նորովի է պատել մեր ժողովրդի հոգին»[15]։

Վերոնշյալ միտքն առավել ամբողջացված գնահատականն ստացավ Գարեգին Բ. Վեհափառի 2022 թ. ապրիլի 24-ի ուղերձում, արդեն 44-օրյա պատերազմի արհավիրքի համապատկերում, կարեւորելով Արցախ աշխարհի պաշտպանության հրամայականը. «Ցեղասպանությունից մեկ դար անց՝ արցախյան 44-օրյա պատերազմից հետո, մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները, հայրենիքի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացները, Ադրբեջանի ագրեսիվ ու հայատյաց քաղաքականությունը փաստում են, որ վերացված չեն հայրենաբնակ մեր ժողովրդի, ի մասնավորի Արցախի հայորդիների ապահով ու անվտանգ կյանքի սպառնալիքները։ Մեր սուրբ նահատակների հիշատակի առջեւ նվիրական մեր պարտքն է համախմբվել եւ պաշտպանել արցախահայ մեր ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքը, Հայաստան ու Արցախ մեր աշխարհի անվտանգությունը, կանխել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության բարբարոսաբար ոչնչացումը, որ չշարունակվի Նախիջեւանում իրագործված մշակութային եղեռնը»[16]։

Վեհափառը հորդորեց ողջ հայությանը, պետական եւ ազգային-եկեղեցական կառույցներին ավելի հետեւողականություն դրսեւորել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, արցախահայության իրավունքների պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքներում. «Այլեւս նվիրական մեր պարտքն է հետամուտ լինել Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը, որ երբեք նման ոճրագործություն տեղ չգտնի մարդկության կյանքում, եւ արդարություն իրականացվի ցեղասպանության զոհերի եւ ցեղասպանություն վերապրած բոլոր ժողովուրդների նկատմամբ։ Պե-

---

[15] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, 2021, 4, էջ 15։

[16] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, 2022, թ. 4, էջ 10–11։

տական եւ ազգային-եկեղեցական կառույցների, ամենքիս հանձնառությունը պիտի շարունակի մնալ միջազգային հարթակներում բարձրաձայնման Արցախի մեր ժողովրդի ոտնահարվող իրավունքների եւ հայոց արդար դատի՝ ի խնդիր ազգիս արժանապատիվ եւ լուսավոր կյանքի ու գալիքի»[17]։

2023 թ. ապրիլի 24-ի ուղերձում Գարեգին Բ. Վեհափառը շեշտադրեց հանուն Հայրենիքի ու հավատի հայոց վերածննդին հավատարիմ մնալու հայության պարտականությունը. «Հարյուր եւ ավելի տարիներ առաջ մեկ եւ կես միլիոն հայորդիք իրենց կեանքի գնով վկայեցին հաւատարմութիւնը աստուածաշնորհ մեր հայրենիքին ու հաւատքին՝ մերժելով ուրացութիւնը։ Նրանք կենդանի պահեցին իրենց հաւատն ու յոյսը մեր ժողովրդի վերածննդի հանդէպ։ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը խորհրդանշում է այդ վերածնունդը, որն իրականութիւն դարձաւ հայրենիքի մի փոքր հատուածում անկախ պետականութեան վերակերտումով, ինչպէս եւ աշխարհի տարբեր երկրներում ցեղասպանութիւնից փրկուած հայորդեաց նոր կեանքի վերընձիւղումով»[18]։

2024 թ. ապրիլի 24-ի ուղերձին նախորդել էին Արցախի ցեղասպանությունը, Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող նոր վտանգները, որոնց բավականին հստակ գնահատականները տվեց Գարեգին Բ. Վեհափառը. «Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը նշում ենք մի շրջանում, երբ մեր ժողովուրդը գտնվում է գոյաբանական նոր սպառնալիքների եւ անվտանգային լրջագույն հիմնախնդիրների հանդիման։ Հայրենի Արցախում իրականացված ցեղասպանական գործողություններից եւ Արցախի հայաթափումից հետո ներկայիս մտահոգիչ ծանր իրավիճակ է Հայաստանի սահմանային տարածքներում»[19]։

Ըստ այդմ՝ Վեհափառը հայությանը պատգամում էր առավել հայրենատեր ու ավանդապահ լինել. «Սուրբ նահատակների լույս հիշատակի առջեւ մեր նվիրական պարտքն է՝ պաշտպանել ամբողջականությունը մեր հայրենի երկրի, նախանձախնդիր լինել հայոց անկախ պետակա-

---

[17] *Նույն տեղում։*

[18] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, 2023, թ. 4, էջ 9։*

[19] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, 2024, թ. 4, էջ 11–12։*

նության զորացմանը եւ որպես սրբազան մասունք՝ պահպանել մեր նախնյաց ավանդություններն ու ժառանգությունը»[20]։

Վերջում եւս մի քանի փաստ։ Գարեգին Բ. Վեհափառը հայրապետական իր խոսքերն է ուղղել Մկրտիչ Ա. Խրիմյանի[21] եւ Կոմիտաս վարդապետի[22] հիշատակին։ Իսկ Հայրենիքում Զորավար Անդրանիկի վերահուղարկավորման միջոցառմանը Վեհափառը շեշտեց. «Այսօր Զորավարիդ աճյունը չէ միայն, որ ամփոփում ենք հայրենի հողում, այլեւ կոթող ենք կանգնեցնում անթաղ ու անշիրիմ հայրենյաց պաշտպան բազում հայորդյաց՝ մեր երկրի սրտում ու մեր հոգիներում անթեղելով ձեր սերը առ Հայրենին, ազատատենչ ոգին ու հավատը հայոց գալիքի հանդեպ»[23]։

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ

Հայոց ցեղասպանության թեմայի հանդեպ Գարեգին Բ. Վեհափառի դիրքորոշման համակողմանի դիտարկման եւ ընկալման տեսանկյունից կարեւոր նշանակություն ունեն ներպետական ասպարեզում նրա ելույթները։

Նախ եւ առաջ, ներկայացնենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման նախապատրաստմանը նպատակաուղղված պետական հանձնաժողովի[24] տարբեր տարիների նիստերում ելույթներին, ինչին Գարեգին Բ. Վեհափառի մասնակցությունը վկայում էր համազգային նշանակության նման հարթակում նրա անբեկանելի կարեւոր հեղինակության եւ խոսքի ազդեցիկության մասին։

Այսպես, 2011 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձ-

---

[20] *Նույն տեղում։*

[21] *Տե՛ս Վեհափառ Հայրապետի խոսքը Խրիմյան Հայրիկի շիրիմի առջեւ, 2000, թ. 4, էջ 14–15։*

[22] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Կոմիտաս վարդապետի շիրիմին, 2019, թ. 9, էջ 15–16։*

[23] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Ս. Էջմիածնի Մայր տաճարում Զորավար Անդրանիկի աճյունի առջեւ, 2000, թ. 2, էջ 10–11։*

[24] *Վեհափառի կարգադրությամբ, ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի նախագահությամբ Մայր Աթոռում եւս ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որի առաջին նիստը գումարվեց 2013 թ. մայիսի 15-ին։ Տե՛ս Մայր Աթոռում տեղի ունեցավ Հայոց Եղեռնի 100-րդ տարելիցի հանձնախմբի ժողովը, 2013, թ. 5, էջ 148։*

նաժողովի առաջին նիստում Գարեգին Բ. Վեհափառը հետադարձ հայացք ձգելով ու գնահատելով ներկան շեշտադրեց. «Միայն Աստծոն է հայտնի, թե որքան ջանք, նվիրում, համբերություն է պահանջվել, որպեսզի այսօր մեր ժողովուրդը կարողանա հաստատել, որ նույն 20-րդ դարը, որ սկսվեց իր դեմ գործված ցեղասպանությամբ, ավարտվեր իր անկախ պետականության վերահաստատմամբ եւ Արցախի ազատագրմամբ: Մեզ բոլորիս քաջալերում է իրողությունը, որ ներկայիս Հայրենիք եւ Սփյուռք կապերի ամրապնդումը ավելի արդյունավոր են Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման խնդիրները քննարկելու եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի ջանքերը համախմբելու քայլերն ու նախաձեռնությունները, որոնցից է այս հանձնաժողովի կազմումն ու նրա գործունեությունը»[25]:

Հանձնաժողովի հաջորդ՝ 2014 թ. մայիսի 27-ի նիստում Գարեգին Բ. Վեհափառը արժեւորեց ցեղասպանության ճանաչման գործընթացը եւ հայության միասնականության կարեւորությունը. «Մեր դատը դեռեւս չի հաղթանակել, սակայն անարդյունք չմնացին մեր ջանքերը: Հայոց ցեղասպանությունը դատապարտած առանձին մարդասեր անձանց այսօր փոխարինում են պետություններ, Եկեղեցիներ, միջազգային ու եկեղեցական կազմակերպություններ: 100-ամյա տարելիցը պիտի դարձնենք արժեւորումը մեր ժողովրդի մեկդարյա հերոսական ուղու, առիթ ու խրախույս՝ մեր ազգային ինքնության զորացման, մեր Հայրենիքի շուրջ համախմբման, միասնականության ոգու ամրապնդման, մեր կյանքը հավատքի, աստվածային պատվիրանների ուղիներում հավատարիմ պահպանելու»[26]:

Իսկ արդեն հանձնաժողովի վերջին՝ 2015 թ. հունվարի 29-ի նիստում ամփոփելով անցյալի դասերը՝ Գարեգին Բ. Վեհափառը հատկապես շեշտադրեց ցեղասպանության միջազգային ճանաչման համապատկերում Թուրքիայի պատասխանատվության հարցը. «Ցեղասպանության 100-ամյակը, մեր արդար դատի պաշտպանության գործում ունեցած ձեռքբերումներով հանդերձ, նոր հանգրվան է պահանջատիրության

---

[25] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին, 2011, թ. 5, էջ 9–10:*

[26] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին, 2014, թ. 5, էջ 12–13:*

եւ հատուցման արդար մեր պայքարի ճանապարհին։ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց մեր նահատակների արյան, մեր կորուսյալ Հայրենիքի, մեր սրբավայրերի, մեր ոչնչացված մշակութային բազում արժեքների հանդեպ արդարությունը դեռեւս չի վերականգնված՝ չնայած Հայոց ցեղասպանությունը ճանաչվել ու դատապարտվել է շատ պետությունների եւ հեղինակավոր կազմակերպությունների կողմից, որոնց երախտապարտ է մեր ժողովուրդը։ Համայն ազգիս արդար սպասումն է, որ Թուրքիան եւս միանա Ցեղասպանությունը ճանաչած երկրներին՝ առերեսվելով սեփական պատմության հետ։ Թուրքիո պետությանը պատասխանատվության կանչելու եւ հայոց դատի պահանջատիրության մեջ մեր ժողովրդի մղիչ ուժը ոչ թե ատելությունն է ու թշնամանքը, այլ արդարությունը վերականգնված տեսնելու պահանջն ու ձգտումը»[27]։

Հայրապետական հեղինակավոր խոսքի հաջորդ հարթակը գիտաժողովներում եւ համաժողովներում Գարեգին Բ. Վեհափառի ելույթներն են։

2000 թ. ապրիլի 18-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում գումարված «21-րդ դարը՝ առանց ցեղասպանությունների» միջազգային գիտաժողովում Գարեգին Բ. Վեհափառը Հայոց ցեղասպանությունը գնահատեց համամարդկային տեսանկյունից. «Աստծո եւ մարդկության առջեւ մեծագույն այդ ոճրի համընդհանուր դատապարտումը անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, համայն մարդկությանը։ Բռնության եւ անօրինության համատեղ մերժումով, արդարության ճանաչումով միայն մարդկությունը կդրսեւորի իր աներեր կամքը՝ նոր հազարամյակ մուտք գործել, հաստատելով երաշխիքները ժողովուրդների խաղաղ համակցության, փոխադարձ վստահության ու գործակցության»[28]։

2005 թ. ապրիլի 20-ին Երեւանում գումարված Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովին ուղղված ողջույնի եւ օրհնության խոսքում Գարեգին Բ. Վեհափառը ցեղասպանության համընդհանուր ճանաչման հույս հայտնեց. «Այսօր մի շարք պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապար-

---

[27] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին, 2015, թ. 1, էջ 10–12։*

[28] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ արտասանված ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում հրավիրված «21-րդ դարը՝ առանց ցեղասպանությունների» գիտաժողովում, 2000, թ. 4, էջ 16–17։*

տումը, իբրեւ մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր, վստահություն է ներշնչում Մեզ, որ այն պիտի գտնի համընդհանուր ճանաչում ու արդար գնահատական։ Հայ ժողովրդի համար Ցեղասպանության մեծագույն աղետով սկսված 20-րդ դարը մարդկության պատմության մեջ մնաց իբրեւ երկու համաշխարհային պատերազմների դար։ Հայոց ցեղասպանության 90-ամյակի հիշատակումը սոսկ առիթ չէ, այլ նաեւ հրամայական մեր ժամանակի մարտահրավերներին անդրադառնալու»[29]։

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Երեւանում 2011 թ. սեպտեմբերի 19-ին գումարվեց Սփյուռքի կազմակերպությունների համահայկական համաժողով, որտեղ Գարեգին Բ. Վեհափառը հայրապետական գնահատականով շեշտադրեց Հայ դատի պաշտպանության պահանջատիրությանը հավատարմությունը. «Հաշված տարիներ հետո հիշատակելու ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, որին ընդառաջ մենք պիտի շարունակենք մեր համակարգված գործունեությունը ընդդեմ Թուրքիո ցեղասպան ժխտողական քաղաքականության։ Պահանջատիրությունը մեր ցանկությունների, մեր որոշումների արդյունք չէ, այլ հետեւանքը մեր ժողովրդի նկատմամբ Թուրքիո գործած ոճիրի։ Հայ դատի պաշտպանությունը ցեղասպանության ենթարկված մեր ժողովրդի հոգու պարտքն է նախնյաց եւ Աստծու առջեւ։ Մենք իրավունք չունենք տկար լինելու, մեր կարողություններն ու հնարավորությունները վատնելու, այլ համախմբված, հետեւողական ու աննահանջ շարունակելու պայքարը մեր ժողովրդի արդարության հաղթանակի համար»[30]։

100-րդ տարելիցին Երեւանում 2015 թ. ապրիլի 22-ին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ համաժողովին հղած ողջույնի եւ օրհնության խոսքում Գարեգին Բ. Վեհափառը նշեց. «Այսօր՝ 100 տարի անց, այդ ոճրագործությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է։ Ցեղասպանության ոճրագործության ժխտման եւ այն անպատիժ թողնելու համար մարդկությունը չափազանց մեծ գին է վճարում։ Մարդկությունը բարոյապես պարտավորություն ունի պայքարելու

---

[29] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքը Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովին, 2005, թ. 4, էջ 7–8։*

[30] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սփյուռքի կազմակերպությունների եւ ներկայացուցիչների համահայկական համաժողովին, 2011, թ. 9, էջ 6–8։*

ընդդեմ ցեղասպանության հանցագործությունների»[31]։ Ապա, համաժողովի նիստում կարեւորեց հատկապես մշակութային ցեղասպանության գործոնը. «Ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում ուղեկցվեց նաեւ մշակութային եղեռնով։ Բազմաթիվ սրբավայրեր՝ եկեղեցիներ, վանքեր, մենաստաններ, հոգեւոր ու մշակութային նվիրական արժեքներ անդառնալիորեն ոչնչացվեցին»[32]։

1918 թ. մայիսյան հերոսամարտերի արժեւորման ու Հայաստանի առաջին Հանրապետության գնահատմանն էին ուղղված Գարեգին Բ. Վեհափառի կոնդակներն ու պատգամները[33]։ Հիմնահարցի տրամաբանական շարունակությանն էր միտված 2018 թ. հուլիսի 17-ին Առաջին Հանրապետության հիմնադիրներից Արամ Մանուկյանի արձանի բացման միջոցառման ընթացքում հայրապետական պատգամը[34]։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶՋՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Գարեգին Բ. Վեհափառը միջազգային եկեղեցական եւ դիվանագիտական ասպարեզներում Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ եռանդուն գործունեություն է ծավալել։ Այսպես՝ նրա ջանքերի շնորհիվ արդեն 2000 թ. աշխարհի եկեղեցիները ապրիլի 24-ը նշեցին որպես «Հայ ժողովրդի նահատակության եւ հարության օր»[35]։ Իսկ 2011 թ. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Եւրոպական

---

[31] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով կազմակերպված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումին, 2015, թ. 4, էջ 23–25։

[32] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով կազմակերպված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի ենթաբաժնի նիստի ընթացքին, 2015, թ. 4, էջ 26–28։

[33] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը Մայիսյան հերոսամարտերի առիթով, 2008, թ. 5, էջ 30–32։ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայաստանի Առաջին Հանրապետության եւ Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի առիթով Հանրապետական մաղթանքի ընթացքում, 2018, թ. 5, էջ 10–12։ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հանրապետության տոնի առիթով, 2023, թ. 5, էջ 8։ Նաեւ տե՛ս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Սարդարապատի հերոսների, 2002, թ. 5, էջ 24։

[34] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Արամ Մանուկյանի արձանի բացման արարողության ժամանակ, 2018, թ. 7, էջ 5–6։

[35] Տե՛ս Աշխարհի եկեղեցիները պիտի նշեն «Հայ ժողովրդի նահատակության եւ հարության օր», 2000, թ. 4, էջ 13։

եկեղեցիների կոնֆերանսի ղեկավարները բոլոր եկեղեցիներին հորդորեցին հիշատակելու Հայոց ցեղասպանությունը[36]։

Իհարկե, բնականաբար, Գարեգին Բ. Վեհափառը մասնակցելով միջազգային տարբեր հեղինակավոր միջոցառումների, պարտադիր կարգով իր ազդեցիկ խոսքն էր ասում, օգտագործելով նման բարձր հարթակները Հայոց ցեղասպանության ճանաչման քարոզչության նպատակով։

Օրինակ՝ 2000 թ. օգոստոսի 29-ին ՄԱԿ-ի գլխավոր ժողովասրահում գումարված կրոնապետերի գագաթնաժողովում Վեհափառը շեշտադրեց հենց համընդհանուր դատապարտման անհրաժեշտությունը. «Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից մեկ ու կես միլիոն հայեր կոտորվեցին եւ գրեթե նույնքան տարագրվեցին իրենց պատմական Հայրենիքից։ Եթե միայն մարդկային հասարակությունը ուժ եւ քաջություն ունենար կանխելու այդ կոտորածը եւ կամ ցեղասպանությունից հետո դատապարտելու այդ եղելությունը, Հիտլերը, վեց միլիոն հրեաների ողջակիզումը նյութելիս, հնարավորություն չէր ունենա հայտարարել. «Ո՞վ է հիշում հայկական կոտորածները»։ 85 տարի անց Հայաստանը եւ ողջ աշխարհում սփռված հայությունը դեռեւս սպասում են Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու համընդհանուր դատապարտմանը, որ որպես արդարության հաղթանակ նույնքան անհրաժեշտ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, նաեւ թուրք ժողովրդին, քանզի չարիքը բացառելու ճանապարհը չարիքի մերժումն է մեր հոգիներում»[37]։

Օտար՝ այն էլ թշնամաբար եւ ժխտողական տրամադրված միջավայրում, Գարեգին Բ. Վեհափառի ազդեցիկ խոսքի վառ օրինակ է նրա գնահատականը Թուրքիայում, ինչն արժանի է պարտադիր վերհիշման եւ արժեւորման։ Կ. Պոլիս այցելության ընթացքում[38], 2006 թ. հունիսի 25-ին մամուլի ասուլիսում պատասխանելով թուրք լրագրողի հարցին Գարեգին Բ. Վեհափառն անվիճելիորեն, որպես անվարապահ ճշմարտություն, շեշտադրեց. «90 տարի է, աշխարհի գիտնականների կողմից Ցեղասպա-

---

[36] Տե՛ս եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի նախագահների հայտարարությունը եկեղեցիներին հիշատակելու Հայոց ցեղասպանությունը, 2011, թ. 4, էջ 143–145։

[37] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված կրոնապետերի գագաթնաժողովում, 2000, թ. 9, էջ 6–11։

[38] Մանրամասն տե՛ս ՎԱՐԴԱՆ ՍՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, *Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Կ. Պոլիս, 2006, թ. 6, էջ 3–39։*

նության խնդիրն ուսումնասիրվում է։ Բազում հատորներ են գրված։ Մեր ժողովրդի համար Ցեղասպանությունն ուսումնասիրման խնդիր չէ։ Դա կատարված փաստ է, որը պետք է ճանաչել։ Դա, բնականաբար, ցանկալի տարբերակն է, կամ կարող են ժխտական կեցվածք արտահայտել երեւույթի նկատմամբ։ Ցեղասպանություն՝ գործված որեւէ ազգի դեմ, չի սահմանափակվում այդ ժողովրդի կյանքի շրջագծերում։ Ցեղասպանությունը չի ճանաչում ազգություն։ Ցեղասպանությունը համամարդկային տարողություն ունի»[39]*։*

Անշուշտ, մի երկրում, որտեղ անգամ ցեղասպանություն բառի արտասանումը քրեորեն հետապնդվում է, Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման մասին հրապարակային բարձրաձայնելն ինքնին վկայում է Գարեգին Բ. հայրապետական աննկուն հավատավոր կեցվածքի եւ քաղաքացիական հայեցի խիզախության մասին։

Այս համապատկերում դիտարկելի է պոլսահայ անվանի մտավորական Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ Հայրապետական ցավակցությունը[40]*։*

Գարեգին Բ. Վեհափառը նաեւ հայրապետական գնահատականներ էր տալիս եւ արժեւորում ինչպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման[41]*, այնպես էլ օտար երկրներում դրա հետ կապված բոլոր նախաձեռնություններին*[42]*։*

Հատուկ հիշատակման արժանի է Թուրքիայի բռնագրված եկեղեցիների եւ եկեղեցապատկան կալվածքների վերադարձման պահանջը, որ ներկայացրին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա.։ Նրանք մասնավորապես շեշտադրում էին. «Պահանջում ենք. 1. ճանաչել Հայոց ցեղասպանությունը, 2. ամբողջապես հատուցել հայ ժողովրդի կրած կորուստների եւ մարդ-

---

[39] *Նույն տեղում, էջ 29–30։*

[40] *Տե՛ս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հրանտ Դինքի սպանության առիթով, 2007, թ. 1, էջ 23։*

[41] *Օրինակ՝ տե՛ս Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւ Ուելսի Ազգային ժողովում, 2002, թ. 10, էջ 32։ Նիստին մասնակցող Անգլիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը փոխանցեց Գարեգին Բ.-ի երախտագիտության խոսքը։ Վեհափառ Հայրապետի գնահատանքի խոսքը Կանադայի Խորհրդարանին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման համար, 2004, թ. 4, էջ 26։*

[42] *Օրինակ՝ տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Բոստոնում Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված հուշակոթողի հիմնօրհնեքի առիթով, 2010, թ. 9, էջ 7։*

կային ու ազգային ոտնահարված իրավունքների դիմաց, 3. անհապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպես իրավատիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան կալվածքները եւ հոգեւոր-մշակութային արժեքները»[43]։

Անտարակույս, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Գարեգին Բ. Վեհափառի գործունեությունը քարոզչական ուղղությամբ ավելի աշխուժացավ։ Այսպես՝ 2014 թ. մայիսի 8-ին Վատիկանում Ֆրանցիսկոս Պապի հետ հանդիպման ժամանակ շեշտադրեց Հայոց ցեղասպանության դատապարտման անհրաժեշտությունը՝ աշխարհում այլեւս դրա չկրկնվելու ենթատեքստում. «Ժամանակին չդատապարտելով Հայոց ցեղասպանությունը՝ աշխարհն ականատես եղավ մեկ այլ ոճրագործության, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում իրագործվեց հրեա ժողովրդի հանդեպ։ Տակավին թարմ են հիշողությունները նաեւ Ռուանդայում եւ Դարֆուրում տեղի ունեցած ցեղասպանությունների»[44]։

Այս տեսակետն ավելի ամրապնդվեց 2015 թ. ապրիլի 12-ին Հռոմի Ս. Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով պատարագի ընթացքում՝ որպես աշխարհում ցեղասպանությունների այլեւս չկրկնվելու պայման համարելով Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը. «Ժամանակին մարդկությունը չկարողացավ կանխել Հայոց ցեղասպանությունը, վերացնել դրա հետեւանքները եւ ականատեսը եղավ Հոլոքոստի, Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի եւ այլ ցեղասպանությունների։ Մենք հավատացած ենք, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը՝ որպես արդարության իրագործման եւ իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնպաստի ապահով ու արդար աշխարհի կերտմանը։ Այս իմաստով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին՝ անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա նահատակությունների հանդեպ, գործադրելու առավել ջանքեր՝ դադարեցնելու եւ կանխե-

---

[43] Տե՛ս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Թուրքիայից պահանջում ենք վերադարձնել բռնագրավված հայկական եկեղեցիներն ու եկեղեցապատկան կալվածքները, 2013, թ. 4, էջ 7–8։

[44] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Կաթոլիկ Եկեղեցու սրբազան քահանայապետ, Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ հանդիպմանը, 2014, թ. 5, էջ 7–10։

լու մարդկության դեմ գործվող ոճիրները։ Սա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության սերմից»[45]։

Իսկ արդեն Վաշինգտոնի ազգային Մայր տաճարում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված էկումենիկ արարողության ժամանակ Գարեգին Բ. Վեհափառը ցեղասպանությունը դիտարկեց նաեւ աշխարհաքաղաքական տեսանկյունից, հորդորելով բոլոր պետություններին ճանաչել եւ դատապարտել Հայոց ցեղասպանությունը. «Եղեռնի տարողության եւ աշխարհի անտարբերության անհամատեղելի իրողության առջեւ մեր ժողովուրդն անցնող 100 տարվա ընթացքում ամենից ավելի քաղցն ու ծարավն ունեցավ արդարության։ Ինչպես առաջին դարում աշխարհի հզորները մերժեցին ընդունել Հիսուսի հարության ճշմարտությունը, այնպես եւ 100 տարվա ընթացքում եղան Հայոց ցեղասպանության իսկության անժխտելիությունը ժխտողներ, անուրանալիությունը ուրացողներ։ Պետությունների մասնավոր շահերի ու քաղաքականության զոհասեղանին բազմիցս ողջակիզվեց մեր ժողովրդի արդարության պահանջը, իսկ ժխտողականությունն ու անպատժելիությունը խրախուս եղան ցեղասպանության նոր ողբերգությունների։ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման այս առիթով մեր սուրբ նահատակների եւ զոհերի հիշատակի առջեւ Մեր հորդորն ու կոչն է, որ պետությունները, դրանց ղեկավարները չհապաղեն իրերն անվանել իրենց անունով՝ ճանաչեն ու դատապարտեն Հայոց ցեղասպանությունը»[46]։

Գարեգին Բ. Վեհափառն բարձր էր գնահատում ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում մեծ վաստակ ունեցող գիտնականներին։ Օրինակ՝ 2001 թ. հոկտեմբերի 18-ին նա «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրեց անվանի հայագետ Ռիչարդ Հովհաննիսյանին։ Վեհափառը կոնդակում հատկապես շեշտեց. «Առավելաբար գնահատելի են Ձեր ջանքերը՝ ի խնդիր Մեծ եղեռնի միջազգայնորեն ճանաչման ու դատապարտման։ Բազմաթիվ գրքերով ու հրապարակումներով, կազ-

---

[45] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված պատարագի ընթացքում, 2015, թ. 4, էջ 20–22։ Նաեւ տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Նեապոլի Ս. Գրիգոր Լուսավորիչ մատրան վերաբացման եւ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ձոնված խաչքարի օրհնության առիթով, 2015, թ. 4, էջ 17–19։

[46] Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Վաշինգտոնի ազգային Մայր տաճարում էկումենիկ արարողության ժամանակ, 2015, թ. 5, էջ 5–8։

մակերպված գիտաժողովներով Դուք գիտական ու հասարակական լայն շրջանակներին ներկայացրել եք դարասկզբին մեր ժողովրդի նկատմամբ իրականացված ոճիրի իրականությունը, նպաստելով, որ բազմաթիվ ոչ հայ պատմաբաններ եւս խորամուխ լինեն խնդրի իսկության մեջ»[47]: Հետագայում՝ 2012 թ. փետրվարի 15-ին, Ռ. Հովհաննիսյանն արժանացավ Հայրապետական օրհնության գրի[48]:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ՝ ՀԱՆՈՒՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ

Ամսագրի կարեւոր հրապարակումներից առանձնացնենք նաեւ մի քանի խմբագրականներ[49], որոնք ամսագրի պաշտոնական տեսակետն արտահայտելով՝ միաժամանակ անուղղակի կարելի է ընկալել նաեւ որպես Մայր Աթոռի դիրքորոշում: Այսպես, 2000 թ. ապրիլի 24-ի առիթով խմբագրականում ցեղասպանությունը դիտարկվում է գործնական քաղաքական տեսանկյունից. «Մարդկութեան դէմ նիւթուած այդ յանցանքի սկիզբը չէր 1915-ը: 1915-ը նոր ընթացք, բեկում էր, երբ վերջնականապէս «ժամանակը դուրս սողաց շաւղից»: Ծրագրուած հալածանքներն ու կոտորածներն անհամեմատ շուտ են սկսուել եւ նոյնպէս կատարուել են քաղաքակիրթ Արեւմուտքի ուղեկցող հայացքի ներքոյ: Այսօր եւ մեծ տէրութիւնները հետամուտ են ոչ թէ արդարութեան, այլ այսրոպէական շահի: Եթէ ոճիրը դատապարտել են՝ միայն խօսքով, հարեւանցի: Թուրքը մշտապէս օգտուել է նրանց լուռ աջակցութիւնից: Քանի դեռ պաշտօնական արեւմուտքը չի խոստովանում, չի դատապարտում եղեռնագործութիւնը՝ քաջալերուած թրքութիւնը մնալու է նոյնը»[50]:

Իսկ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով խմբագրականում թեման դիտարկվում էր աշխարհաքաղաքական տեսանկյունից. «Ապրիլ 24-ը պէտք է վերածուի կողմնացոյցի, որով երիտասարդութիւնը կը կարողանայ կողմնորոշուել դէպի հայոց ապագան՝ բարի գործերով

---

[47] *Տե՛ս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը Ռիչարդ Հովհաննիսյանին «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրելու մասին, 2001, թ. 10–11, էջ 44–45:*

[48] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գիրը Ռիչարդ Հովհաննիսյանին, 2012, թ. 2, էջ 3–4:*

[49] *Օրինակ՝ տե՛ս Շարունակվող ոգեկոչում, 2005, թ. 4, էջ 9: Խմբագրական,* Տ. Ոսկան քհն. Յովհաննիսեան, *Անլռելի զանգակատուն, 2016, թ. 4, էջ 5–7:*

[50] *Տե՛ս Խմբագրական, 2010, թ. 4, էջ 3–5:*

յաղթահարելու չարը՝ ըլլալով եւ մնալով պարկեշտ, շինարար ու քաջարի քրիստոնեայ հայեր։ Ապրիլ 24-ը՝ հայոց պատմութեան տխրագոյն էջերէն մէկը, կը հրաւիրէ այսօր հասակ նետող երիտասարդութիւն ունենալու։ Առաջին՝ լաւ յիշողութիւն հայոց պատմութեան սրտաճմլիկ պահերու նկատմամբ։ Երկրորդ՝ զարգացնել կարողութիւնը մեր ներկան ճշգրտապէս ըմբռնելու այս աշխարհի յարափոփոխ քաղաքական վիճակներուն դիմաց, որոնք բոլորն ալ կը միտին մահացու հարուած հասցնել համրանքով փոքր ազգերու գոյութեան»[51]։

Անգամ 2020 թ. ադրբեջանական նոր ագրեսիայից հետո ամսագիրը կրկին հույս եւ հավատ ներշնչեց. «1915 թ. ապրիլի 24-ին հայոց ինքնութիւնը, որ դարերով ամրապնդուել էր քրիստոնէութեան առաջին մարտիրոսներից մինչ Ոսկեդար՝ մինչ մեր առաջին թարգմանիչները, մինչ Նարեկացիական աղօթքն առ Աստուած, մինչ հայրենի հողի համար մղած պայքարը, չաղաւաղուեց ու չեղծուեց Օսմանեան Թուրքիայի մահասարսուռ ոճրի դէմ, այլ հոգում առաւել ամրագրեց անկորուստ հայրենիքի ամբողջական պատկերը։ Հայ մարդը հաւատարիմ մնաց իր երկրին ու հաւատամքին. բանաստեղծը վերադարձաւ՝ իր հայրենակցի հետ կիսելու տառապանքի օրերը, գեղջուկը՝ որդեկորոյս ու հայրենակորոյս, չկորցրեց ապրելու յամառութիւնն ու բարիք արարելու չիմաստազրկուող ձիրքը, Եկեղեցին ու հոգեւորականը շարունակեցին աստուածասէր ու ազգանպաստ գործունէութիւնը, դպրոցը ոսկեղինիկ լեզուով կրթեց իր սաներին։ Եւ ազգն իր պապերից աւանդուած յամառութեամբ գոյատեւեց՝ Յարութեան հաւատն իր ինքնութեան անքակտելի մասը դարձրած։ Կեանքի շրջապտոյտը բաց հասարակութիւններ ու «ջնջուող» սահմաններ գծող աշխարհում 2020 թ. աշնանը նոր փորձութիւն բերեց հայ ժողովրդին՝ պատերազմի արհաւիրքը։ Ցեղասպանութիւնից հարիւր եւ աւելի տարի անց մեր հայրենիքը կրկին լինել-չլինելու վտանգի առջեւ էր, քանի որ Ադրբեջանը որսացել էր յարմար պահը՝ ազատութիւն տալու պարտուածի իր երեսնամեայ ատելութեանը։ Կրկին աւերուեց հայի տունը, այրուեց իր կառուցողի ձեռքով՝ թշնամու՝ ուրիշինը խլելու սովոր ձեռքը չընկնելու համար»[52]։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[51] *Տե՛ս խմբագրականի փոխարէն,* Տ. Աւագ արք. Ասատուրեան, *Ապրիլ 24-ը հայ նահատակների արեան սկիհն է, 2015, թ. 4, էջ 5–7։*

[52] *Տե՛ս խմբագրական, 2021, թ. 4, էջ 5–7։*